



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2009 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը, առաջնորդվելով ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ օրենքներով, ՀՀ նախագահի հրամանագրերով, ՀՀ կառավարության և ՀՀ վարչապետի որոշումներով, ինչպես նաև ՀՀ կառավարության գործունեության ծրագրով և դրա իրագործումն ապահովող միջոցառումներով, 2009 թվականին իրականացրել է հետևյալ գործառույթները:

2009 թվականին տարածքային կառավարման նախարարության աշխատակազմում փաստաթղթաշրջանառությունն իրականացվել է “Mulberry” համակարգով: 2009 թվականի ընթացքում տարածքային կառավարման նախարարություն ստացվել, մշակվել և “Mulberry” համակարգի միջոցով գրանցվել է 14131 մտից փաստաթուղթ, որից դիմումներ քաղաքացիներից` 653, գրություններ քաղաքացիների դիմումների հիմքով` 539, գրություններ` 10000, այլ գրություններ(որոշումներ, քաղվածքներ, արձանագրություններ)` 2939: Նույն ժամանակահատվածում իրականացվել է 7429 էլից փաստաթղթերի առաքում:

2009 թվականին ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2008 թվականի հուլիսի 24-ի N 36-Ա հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարությունում քաղաքացիների ընդունելությունների կազմակերպման կարգի» դրույթներին համապատասխան իրականացվել է 12 ընդունելություն, որին մասնակցել են 61 քաղաքացի:

Նախարարության գործունեությունը հիմնականում նպատակաուղղված է եղել.

ՀՀ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման բնագավառ

Հայաստանի Հանրապետության բոլոր 10 մարզպետարանները 2009 թվականի դրությամբ ունեին տարբեր կառուցվածքներ և հաստիքացուցակներ: Մարզպետարանների գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով խնդիր դրվեց միասնականացնել բոլոր մարզպետարանների կառուցվածքը, որի նպատակով ընդունվեց ՀՀ կառավարության համապատասխան որոշում: Աշխատանքներ են իրականացվել նաև մարզպետարանների կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների գործառույթների, ինչպես նաև կանոնադրությունների միասնականացման ուղղությամբ:

ՀՀ Նախագահի հանձնարարությամբ 2009 թվականին նախարարության կողմից մշակվել և կառավարության կողմից հավանության է արժանացել մարզպետների աշխատանքի գնահատման չափորոշիչները և դրանց հիման վրա ձևավորվող գնահատականների միավորները, որոնց հիման վրա էլ 2009 թվականի արդյունքներով մարզպետների գործունեությանը առաջին անգամ կտրվի գնահատական:

2009 թվականին նախարարությունը համապատասխան մարզպետարանների հետ մշակել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացրել ՀՀ Սյունիքի, Լոռու և Շիրակի մարզերի զարգացման ծրագրերը, առաջին երկուսը ՀՀ կառավարության կողմից 2009 թվականին արժանացել են հավանության: Տարածքային համաչափ զարգացման համատեքստում ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել նաև քաղաքների առաջանցիկ զարգացման նպատակային ծրագրերի կազմման և իրականացման հայեցակարգ:

Իրականացվել է նաև համագործակցություն մարզային և համայնքային նշանակության նպատակային ծրագրեր իրականացնող միջազգային կազմակերպությունների հետ:

ՀՀ կառավարության որդեգրած տարածքային համաչափ զարգացման քաղաքականության իրականացման համատեքստում կազմակերպվող ՀՀ կառավարության արտազանա նիստերի օրակարգերի ձևավորման նպատակով գործադիր իշխանության հանրապետական մարմիններից հավաքագրել, ամփոփվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել համապատասխան առաջարկություններ: Իրականացվել է նաև ՀՀ կառավարության արտազանա նիստերի ընթացքում տրված հանձնարարականների կատարման ընթացքի հետևում:

ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը մշտապես իր ներկայացվածությունն է ապահովվել ՀՀ մարզերում կայացած մարզխորհրդների նիստերին՝ դրանց անց կացման արդյունավետությունը ստուգելու նպատակով:

Բազմաթիվ խորհրդատվական նյութերի և պաշտոնական պարզաբանումներ է տրամադրվել տարածքային կառավարման մարմիններին:

Իրականացվել է մշտական հսկողություն մարզպետների ընդունած գերատեսչական իրավական ակտերի իրավական տեխնիկայի պահպանության և բովանդակության նկատմամբ:

Իր կողմից հաստատած տարածքային կառավարման մարմինների վարչական վերահսկողություն իրականացնելու ամենամյա ծրագրերին համապատասխան ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը, որպես իրավական վերահսկողություն իրականացնող բարձրագույն մարմին (Երևանի համար նաև մասնագիտական վերահսկողություն իրականացնող բարձրագույն մարմին) իրավական փորձաքննության է ենթարկել մարզպետների կողմից տեղական ինքնակառավարման մարմինների ընդունած որոշումների վերաբերյալ վերահսկողության արձանագրությունները:

Իրականացվել է նաև մի շարք միջոցառումներ «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրի և Սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունների գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում կայացել է ՀՀ տարածքային կառավարման նախարարի 08.08.08թ.թիվ 47-Ա հրամանով ստեղծված փախստականներին ժամանակավոր կացարաններում բնակեցնելու համար ուղեգրերի տրամադրման գործընթացը կազմակերպելու նպատակով ստեղծված աշխատանքային խմբի 18 նիստ՝ որի արդյունքում հանրակացարաններում ժամանակավոր բնակության ուղեգիր է տրամադրվել փախստականի:

Սահմանված կարգով ՀՀ կառավարության քննարկմանն են ներկայացվել ՀՀ մարզպետների կողմից ներկայացված թվով 30 որոշման նախագծեր:

Դիրքորոշում է ներկայացել գործադիր իշխանության հանրապետական մարմինների կողմից ներկայացված թվով 756 իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ:

Տարածքային զարգացման հայեցակարգի մշակումը (Տարածքային զարգացման հայեցակարգը ՀՀ կառավարության 28.04.2008թ. թիվ 380-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության գործունեության ծրագրում ամրագրված է որպես 4-րդ գերկայություն ՀՀ կառավարության 24.07.2008թ. թիվ 878-Ն որոշման 4.2.2 բաժնի 4-րդ կետով սահմանվում է ՀՀ կառավարության 2008–2012թթ. ծրագրի գերակայություն, վերջինիս իրականացման սցենարը սահմանված է ՀՀ կառավարության 30.10.2008թ. թիվ 1207-Ն որոշմամբ հաստատված Կայուն Զարգացման Ծրագրի Տարածքային զարգացում բաժնում (9-րդ բաժին), որը նախատեսում է նպատակային տարածքային քաղաքականության իրականացում, որն ուղղված կլինի Երևանից դուրս տնտեսական աճի արագացման խրախուսմանը), որպես միջոցառում ներառվել է ՀՀ Նախագահի 06.05.2009թ. ՆԿ-68-Ա կարգադրությամբ հաստատված «Եվրոպական հարևանության քաղաքականության Հայաստանի Հանրապետություն-Եվրոպական միություն գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2009-2011թթ. միջոցառումների ցանկում» և Հայաստան-Եվրոմիություն համագործակցության շրջանակում վերջինիս մշակման համար ստեղծվել աշխատանքային խումբ շահագրգիռ պետական կառավարման մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներից:

ԿԶԾ «2010-2011թթ. քաղաքականությունների կարճաժամկետ ծրագրում» ներառելու համար մշակվել և ՀՀ էկոնոմիկայի նախարարություն է ներկայացվել Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտային ծրագիրը:

Խնդիր էր դրված ունենալ ՀՀ մարզերի միջազգային համագործակցության վերաբերյալ ամբողջական պատկերը: Ուսումնասիրությունների արդյունքում հանձնարարվել է մարզպետներին ակտիվացնել արտաքին կապերը և միջոցներ ձեռնարկել դրանց արդյունավետ իրագործման ուղղությամբ:

2009 թվականի մայիսի 31-ին կայացան Երևանի ավագանու առաջին ընտրությունները, որոնք նշանավորվեցին նրանով, որ առաջին անգամ Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները անցկացվեցին համամասնական սկզբունքով: Այդպիսով բավարարվեցին Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 108-րդ հոդվածի, ինչպես նաև Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի պահանջները: «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով տարվա ընթացքում ՀՀ տարածքային կառավարման նախարարության կամ գործադիր իշխանության պետական մարմինների նախաձեռնությամբ կատարվել են փոփոխություններ թվով 66 իրավական ակտերում, որոնք սահմանված կարգով ներկայացվել են ՀՀ կառավարություն:

ՀՀ վարչապետի 2009 թվականի մայիսի 26-ի N427-Ա որոշմամբ ստեղծվել է համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգի, ինչպես նաև միջոցառումների ծրագրերի հրապարակային և մասնակցային քննարկումների, միջազգային փորձագիտական գնահատականների հաշվի առնման արդյունքում վերջնական լրամշակման գործընթացը կազմակերպող միջգերատեսչական հանձնաժողով, որն իր հերթին բաժանվել է երեք աշխատանքային խմբի՝ համայնքների խոշորացման հարցերի, միջհամայնքային միավորումների ձևավորման հարցերի, հանրային մասնակցության ու իրազեկման հարցերի: Համայնքների խոշորացման հարցերի աշխատանքային խմբի կողմից միջգերատեսչական հանձնաժողովի քննարկման են ներկայացվել ՀՀ Շիրակի, Գեղարքունիքի, Սյունիքի մարզերում մի քանի համայնքների խոշորացման պիլոտային ծրագրեր: Դրանք քննարկվել են նաև համապատասխան համայնքներում, ինչի արդյունքում էլ ավելի ակնհայտ է դարձել վարչատարածքային բարեփոխումների իրականացման անհրաժեշտությունը: Այդ

ուղղությամբ 2010 թվականին նախատեսվում է իրականացնել կոնկրետ միջոցառումներ, մեկնարկելով հայեցակարգային դրույթների կիրառման գործընթացը:

«Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքի նախագիծը 29.04.2009թ. ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունվել է առաջին ընթերցմամբ, այժմ գտնվում է երկրորդ ընթերցման ռեժիմում: Մշակվել և ՀՀ կառավարություն են ներկայացվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը (համայնքների ավագանիների կողմից Վերահսկիչ պալատի և այլ պետական մարմինների կողմից իրականացված ստուգումների արդյունքների պարտադիր քննարկման պահանջի օրենսդրական կարգավորում), «Հարկերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը (տեղական նոր հարկատեսակների ներմուծում, համայնքային բյուջեների եկամտային մասն ապահովող հարկատեսակների հավաքագրման մեխանիզմների կատարելագործում), «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը (կոմպրեսացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրք սահմանում), «Հյուրանոցային հարկի մասին» ՀՀ օրենքի նախագիծը (համայնքային բյուջեների եկամտային մասն ապահովող հարկատեսակի հավաքագրման մեխանիզմների հստակեցում): Նախարարության կողմից մշակվել և ՀՀ կառավարություն են ներկայացվել համայնքի ղեկավարին պետության պատվիրակած լիազորությունների իրականացման մասով՝ «Սոցիալական աջակցության (ծառայությունների) բնագավառում համայնքի ղեկավարին պետության պատվիրակած լիազորության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, համայնքի ղեկավարի պարտադիր լիազորությունների իրականացման մասով՝ «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

ՀՀ համայնքային ծառայության բնագավառ

«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքում 2008 թվականին կատարվել են ծավալուն փոփոխություններ, որոնք կիրառության մեջ են մտել 2009 թվականից: Այս ընթացքում համապատասխան փոփոխություններ են կատարվել ենթաօրենսդրական գրեթե բոլոր ակտերում, նախարարության կողմից ստեղծվել և վարվում են համայնքային ծառայողների մասին տվյալների միասնական գրանցամատյանը և կադրերի ռեգերվը:

Ըստ գրանցամատյանի տվյալների 2009թ.-ի դեկտեմբերի 1-ի դրությամբ համայնքային ծառայության պաշտոնները 6863 են, որոնցից զբաղեցված են 6162 –ը կամ 89,7 %-ը:

2009 թվականին Երևանի կարգավիճակի փոփոխության կապակցությամբ քաղաքապետարանի նախկին քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձինք օրենքով սահմանված կարգով նշանակվեցին համայնքային ծառայության համապատասխան պաշտոններում:

Այս տարի ավարտվել է համայնքային ծառայողների առաջին վերապատրաստման իրականացման փուլը: Ընթացիկ տարում վերապատրաստվել է 642 համայնքային ծառայող: Առաջին վերապատրաստման գործընթացի շրջանակներում վերապատրաստվել են 4572 համայնքային ծառայող:

Ընթացիկ տարում ատեստավորվել են առաջին վերապատրաստումն անցած թվով 779 համայնքային ծառայող: Թափուր պաշտոններ զբաղեցնելու համար հայտարարվել է 1553 մրցույթ, որոնցից կայացել են 922-ը, կամ 59,3 տոկոսը:

Ծառայողական քննության անցկացման լիազորությունները նախարարությանը օրենքով վերապահվելուց հետո անցկացվել է 2 ծառայողական քննություն:

Համայնքային ծառայության համակարգի ներդրման արդյունավետության բարձրացման նպատակով նախարարության կողմից իրականացվել են համայնքների ղեկավարների աշխատակազմերում կադրային գործի վարման նկատմամբ վերահսկողություն: Նշված գործընթացի շրջանակներում 2009 թվականին ուսումնասիրություններ են կատարվել 80 համայնքներում: Կատարված ուսումնասիրությունների արդյունքում ՀՀ մարզպետներին և համայնքների ղեկավարներին են ներկայացվել հայտնաբերված թերությունները, ինչպես նաև դրանց վերացման համար անհրաժեշտ առաջարկությունները ու պարզաբանումները: ՀՀ մարզպետարանների և համայնքների ղեկավարների աշխատակազմերի աշխատակիցների հետ քննարկվել են ընդհանուր և առանձին բարձրացված խնդիրներ, ներկայացվել են դրանց լուծման ուղղությունները, մատուցվել է անհրաժեշտ խորհրդատվություն:

ՀՀ տարածքային կառավարման և տեղական ինքակառավարման մարմինների տեղեկատվայնացման մակարդակի բարձրացման նպատակով իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- իրականացվել են նախարարության պաշտոնական ինտերնետային կայքի կատարելագործման և բարելավման ուղղությամբ աշխատանքներ, պարբերաբար կատարվել են ինտերնետային կայքի թարմացման աշխատանքներ,
- մշակվել է ՀՀ մարզպետարանների ինտերնետային պաշտոնական կայքերի սպասարկման, թարմացման, տեղեկատվության կառուցվածքի և ծավալի տիպայնությունը ապահովող մեթոդական ուղեցույց և միասնական կայքէջի կառուցվածքի տեխնիկական առաջադրանք,
- իրականացվել են նախարարության տեղեկատվական ռեսուրսների անվտանգության ապահովման և հակավիրուսային պաշտպանության և լոկալ ցանցի սպասարկման և զարգացման աշխատանքները,
- իրականացվել է նախարարության տեղեկատվական ռեսուրսների օգտագործման վերլուծություն,
- իրականացվել է «Mulberry» գործավարության համակարգի շահագործումը նախարարությունում,
- Պետական հատվածի արդիականացման ծրագրի (ՊՀԱԾ) շրջանակներում՝
 1. ՀՀ մարզպետարաններին տրամադրվել է համապատասխան համակարգչային տեխնիկա (սերվերներ, սկաներներ և անխափան սնուցման սարքեր), ներդրվել է փաստաթղթերի էլեկտրոնային շրջանառության «Mulberry» համակարգը: Իրականացվել է աշխատակիցների ուսուցումը: Փաստաթղթաշրջանառությունը մարզպետարաններում, ինչպես նաև փաստաթղթերի փոխանակումը պետական մարմինների հետ՝ իրականացվում է «Mulberry» համակարգի միջոցով:
 2. ՀՀ 225 համայնքներում և ՔԿԱԳ բոլոր 54 տարածքային բաժիններում տեղադրվել են էլեկտրոնային կառավարման համակարգեր, իրականացվել են այդ համակարգերի կատարելագործման, բարելավման և սպասարկման աշխատանքներ: Վերոնշյալ մարմիններին տրամադրվել է համակարգչային տեխնիկա, համակարգերը շահագործող աշխատակիցների հետ անցկացվել են ուսուցման և վերապատրաստման դասընթացներ:
- մշակվել է ՀՀ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների տեղեկատվայնացման ռազմավարական ծրագիր (հայեցակարգ),
- Լոռու, Գեղարքունիքի, Տավուշի մարզպետարաններում և ՏԿ նախարարությունում տեղադրվել են համայնքների գույքահարկի և հողի հարկի տվյալների միասնական էլեկտրոնային շտեմարանները,

- մշակվել են առաջարկություններ տարածքային կառավարման ոլորտի տեղեկատվական միասնական համակարգի հայացակարգի վերաբերյալ,
- ՀՀ Կենտրոնական բանկի աշխատակիցների հետ համատեղ իրականացվել են ՀՀ ՏԿՆ գործառույթների նկարագրության և ռիսկերի գնահատման աշխատանքներ, աջակցություն է ցուցաբերվել ՀՀ մարզպետարաններում իրականացվող նմանատիպ աշխատանքներին,
- «Դիջիթեք-2009» տեղեկատվական հեռահաղորդակցման և բարձր տեխնոլոգիաների ցուցահանդեսին ներկայացվել է Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը:
- Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության և “Ձեռնարկությունների ինկուբատոր” հիմնադրամի հետ համատեղ աշխատանքներ են տարվել ՀՀ մարզերում ինֆորմացիոն հասարակության ձևավորման, ինչպես նաև այդ բնագավառում ձեռներեցության զարգացման ուղղությամբ: ՀՀ Չարենցավան, Հրազդան, Սևան, Իջևան և Դիլիջան քաղաքներում կազմակերպվել են «Դիջիթեք անիվների վրա» ցուցահանդեսներ:

Ֆինանսական բնագավառ

2009 թվականին ՀՀ տարածքային կառավարման նախարարության /նախարարի աշխատակազմի մասով/ պահպանման ծախսերով նախատեսվել է 72826.3 հազ.դրամ, որից ՀՀ կառավարության 2009 թվականի մարտի 26-ի թիվ 302-Ն որոշման համաձայն կասեցվել է 9714.8 հազար դրամ և կազմել է 63111.5 հազ. դրամ: Վերաբաշխումների արդյունքում տարեկան բյուջեն կազմել է 54551.5 հազ.դրամ, որից ծախսը կազմել է 52105.1 հազ.դրամ և բյուջեի մնացորդը կազմել է 2446.4 հազ.դրամ:

ՀՀ տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի մասով պահպանման ծախսերով նախատեսվել է ֆինանսավորել 241563.6 հազ.դրամ, որից ՀՀ կառավարության 2009 թվականի մարտի 26-ի թիվ 302-Ն որոշման համաձայն կասեցվել է 6250.3 հազար դրամ և կազմել է 235313.3 հազ. դրամ: Վերաբաշխումների արդյունքում տարեկան բյուջեն կազմել է 247873.3 հազ.դրամ, որից ծախսը կազմել է 242633.3 հազ.դրամ և բյուջեի մնացորդը կազմել է 5240.0 հազ.դրամ:

ՀՀ տարածքային կառավարման նախարարությանը «Համայնքային ծառայողների վերապատրաստում» ծրագրով 2009թ. նախատեսված 77300.0հազ. դրամից վերաբաշխման արդյունքում մնացած 73300.0հազ. դրամ գումարից ծախսը կազմել է 17494.1 հազար դրամ և բյուջեի մնացորդը կազմել է 55805.9հազ. դրամ:

2009 թվականի պետական բյուջեով ներդրումներ «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ին և ներդրումներ «Համակարգչային կենտրոն» ՊՈԱԿ-ին համապատասխան ծրագրով «Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածով նախատեսված 82917.4 հազար դրամ և 5392.0 հազար դրամ գումարները կասեցվել են ամբողջությամբ:

ՀՀ Կառավարության 2009 թվականի հունվարի 29-ի N 445-Ս որոշմամբ ՀՀ տարածքային կառավարման նախարարության «Ճանապարհաշինություն» ծրագրի իրականացման գրասենյակ» և «Դպրոցաշինություն» ծրագրի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկների՝ 2009թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների պահպանման ծախսերի ֆինանսավորման համար՝ ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի հաշվին ՀՀ տարածքային կառավարման նախարարությանը հատկացված 35011.8 հազ.դրամը ֆինանսավորվել է ամբողջովին և «Ճանապարհաշինություն» ծրագրի իրականացման գրասենյակ»-ի լուծարումից հետո 111.5 հազար դրամ վերադարձվել է պետբյուջե:

2009 թվականի պետական բյուջեով ՀՀ տարածքային կառավարման նախարարությանը ՄԱԿ-ի զարգացման ծրագրի շրջանակներում հատկացված գումարներից համաֆինանսավորման 58550.2 հազար դրամ գումարը ֆինանսավորվել է ամբողջությամբ:

ՀՀ կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1502-Ն որոշման համաձայն ՀՀ տարածքային կառավարման նախարարությանը հատկացվել է 10900.0 հազար դրամ գումար Վայոց Ձորի մարզի Ջերմուկի քաղաքային համայնքին և Շիրակի մարզի Ամասիայի գյուղական համայնքին համապատասխանաբար 6900.0 հազար դրամ և 4000.0 հազար դրամ հատկացնելու նպատակով: Գումարները ֆինանսավորվել են ամբողջությամբ:

2009թվականի պետական բյուջեով նախատեսված ծրագրերի ֆինանսավորում

հազ.դրամ

Հ/Հ	Ծրագրի անվանումը	2009թ. պետ.բյուջեով նախատեսված	ՀՀ կառավարության 26.03.2009թ N302-Ն որոշման համաձայն կասեցված գումար	2009թ. բյուջե	Ծախս	Բյուջեի մնացորդը
1.	Փախստականների սոց. խնդիրների լուծման միջոցառումներ	14056.8		14056.8	14056.2	0.6
2.	Փախստականների և նրանց ընտանիքների վերաբերյալ տեղեկատվության կուտակում	44138.5	285.0	43853.5	43853.5	
3.	Փախստականների կեցության խնդիրների լուծման միջոցառումներ	10959.0		10959.0	8515.4	2443.6
4.	Փախստականի կարգավիճակ հայցողին տրվող միանվագ նպաստ	500.0		500.0		500.0
5.	Արխիվային ծառայություններ	308195.4	145.2	308050.2	308050.2	
6.	Թրաֆիքինգի դեմ պայքարի նպատակով բրոշուրների, տեղեկատվական թերթիկների մշակում և հրատարակում	6000.0		6000.0	3000.0	3000.0

Միգրացիայի և փախստականների բնագավառ

ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալությունը 2009 թվականի ընթացքում իր գործունեությունը ծավալել է ՀՀ կառավարության կողմից հաստատված կանոնադրության համապատասխան՝ իրականացնելով իրեն վերապահված գործառույթները: Աշխատանքները կազմակերպվել են տարեկան աշխատանքային ծրագրին համապատասխան:

Գործակալության կողմից սահմանված ժամկետներում պատրաստվել և ՀՀ տարածքային կառավարման նախարարություն են ներկայացվել առաջարկություններ միգրացիայի ոլորտում ՀՀ կառավարության 2009 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի և 2009 թվականի գերակա խնդիրների, ՀՀ կառավարության գործունեության ծրագրի կատարումն ապահովող 2008-2012 թթ միջոցառումների ցանկի՝ միգրացիայի ոլորտի ծրագրային դրույթների իրագործմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

ՀՀ կառավարություն ներկայացնելու նպատակով 2009 թվականին մշակվել և ՀՀ տարածքային կառավարման նախարարություն են ներկայացվել 2008 թվականի նոյեմբերի 27-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքից բխող և դրա կիրարկումն ապահովող ՀՀ կառավարության 8 որոշումների և 1 գերատեսչական նորմատիվ իրավական ակտի նախագծեր: Դրանցից 4 որոշումներն արդեն ընդունվել են ՀՀ կառավարության կողմից, իսկ գերատեսչական նորմատիվ իրավական ակտը գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարությունում:

ՀՀ կառավարության 2009թ.-ի սեպտեմբերի 17-ի թիվ 1073-Ն որոշմամբ ընդունվել է «2008թ.-ի նոյեմբերի 7-ի «ՀՀ կառավարության և Շվեդիայի Թագավորության կառավարության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման մասին» համաձայնագրի շրջանակներում շվեդական կողմից ստացվող դիմումները ՀՀ պետական մարմինների կողմից քննարկելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումը:

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակել է գործել օտարերկրյա պետություններում բնակվող մեր հայրենակիցների հայրենադարձության խթանմանն ուղղված համակարգը, որը տեղակայված է **www.backtoarmenia.am /com** հասցեում: Համակարգի միջոցով իրենց հուզող հարցերի պատասխաններն են ստացել 365 անձինք:

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են աշխատանքները բնակչության շրջանում տեղեկատվության տարածման միջոցով անօրինական միգրացիան կանխարգելելու ուղղությամբ:

Թրաֆիքինգի դեմ պայքարին ուղղված աշխատանքները ծավալվել են 2007 թ. դեկտեմբերի 6-ին ՀՀ կառավարության կողմից հաստատված թրաֆիքինգի դեմ պայքարի կազմակերպման 2007-2009թ.թ. Ազգային ծրագրին համապատասխան:

Հաշվետու ժամանակաշրջանում առաջին անգամ ՀՀ պետական բյուջեում առանձին տողով միջոցներ են հատկացվել թրաֆիքինգի դեմ պայքարի նպատակով: Այդ միջոցներից 6 մլն դրամը հատկացվել է միգրացիոն գործակալությանը: Գործակալության կողմից մշակվել և 100.000 օրինակով տպագրվել է «Օրինական ճանապարհով օտարերկրյա պետություններ մուտք գործելու, բնակվելու և աշխատանքային գործունեություն ծավալելու կարգի և պայմանների մասին» տեղեկատվական թերթոնը, այդ նպատակով ծախսելով հատկացված 6 մլն-ից 3 մլն դրամը: Գործակալության կողմից մշակվել է նաև «Թրաֆիքինգ՝ ժամանակակից

ստրկություն» տեղեկատվական գրքույկի նախագիծը, որը սակայն չի տպագրվել հաշվի առնելով պետական բյուջեի միջոցների սղությունը:

Գործակալությունն ի դեմս գործակալության պետ Գ. Եզանյանի իրականացրել է ՀՀ-ում մարդկանց շահագործման /թրաֆիքինգի/ հարցերով խորհրդի քարտուղարի վրա դրված պարտականությունները: Հաշվետու ժամանակաշրջանում կայացել է Խորհրդի 3 նիստ:

ՀՀ-ում մարդկանց շահագործման /թրաֆիքինգի/ հարցերով խորհրդի և Արաբական Միացյալ Էմիրությունների մարդկանց շահագործման /թրաֆիքինգի/ դեմ պայքարի ազգային կոմիտեի միջև, ընթացիկ տարվա դեկտեմբերի 5-ին ստորագրվել է փոխըմբռման հուշագիր մարդկանց շահագործման /թրաֆիքինգի/ դեմ պայքարում համագործակցության մասին:

Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ Հայաստանն առաջընթաց է արձանագրել մարդկանց շահագործման /թրաֆիքինգի/ դեմ պայքարի ոլորտում: ԱՄՆ պետքարտուղարության` թրաֆիքինգի վերաբերյալ ամենամյա զեկույցում Հայաստանը երկրների 2-րդ խմբի վերահսկման ցուցակից հանվել և ընդգրկվել է բուն 2-րդ խմբի երկրների ցուցակում:

Ինչպես և նախորդ տարիներին, յուրաքանչյուր ամիս ամփոփվել և վերլուծվել են Հայաստանից մեկնող և Հայաստան մուտք գործող անձանց թվաքանակի վերաբերյալ համապատասխան գերատեսչություններից ստացված տվյալները: 2009թ.-ի 11 ամիսների տվյալները ցույց են տալիս, որ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ տեղի է ունեցել.

- ուղևորահոսքերի ծավալների աճի տեմպի նվազում
- ուղևորահոսքերի ընդհանուր ծավալում ցամաքային ճանապարհներով կատարվող սահմանահատումների բաժնի աճ
- միգրացիայի բացասական մնացորդի որոշակի նվազում

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակական աշխատանքներ են տարվել ՀՀ կառավարությանն առընթեր պետգույքի կառավարման վարչության հետ` կապված տարբեր գերատեսչությունների ենթակայության տակ գտնվող հանրակացարաններում բնակվող փախստական ընտանիքների կողմից զբաղեցրած տարածքների սեփականաշնորհման հետ: 2009թ. փախստական 22 ընտանիքներ օգտվել են այդ գործընթացից:

Փախստական 23 ընտանիք նախարարությունում ստեղծված աշխատանքային խմբի միջոցով տեղավորվել են նախարարության «Հանրակացարաններ» ՓԲԸ-ի տնօրինության հանրակացարաններում:

ՀՀ կառավարության 2009թ. փետրվարի 5-ի թիվ 118-Ն որոշման համաձայն Երևան քաղաքի Տերյան 107 և Մոլդովական 70/1 հասցեում բնակվող փախստական ընտանիքների վերաբերյալ պատրաստվել են անհրաժեշտ փաստաթղթեր և ներկայացվել ՀՀ քաղաքաշինության նախարարության հանձնաժողովի քննարկմանը:

2009թ. ընթացքում ՀՀ քաղաքացիություն են ձեռք բերել 401 փախստական: Մինչև այժմ ՀՀ քաղաքացիություն են ձեռք բերել Ադրբեջանից բռնագաղթած ավելի քան 82600 փախստական:

ՀՀ կառավարության 2009թ. հուլիսի 29-ի թիվ 907-Ն որոշման համաձայն ստեղծվել է 1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթված անձանց ապահովագրական ստաժները սահմանող հանձնաժողով և հաստատվել է հանձնաժողովի աշխատակարգը: Անցած ժամանակաշրջանում տեղի է ունեցել հանձնաժողովի 12 նիստ, որի ընթացքում քննվել է ավելի քան 120 դիմում: Քննարկված

դիմումներից 41 գործով հանձնաժողովը կայացրել է որոշում փախստականների ապահովագրական ստաժը սահմանելու մասին:

Հաշվետու ժամանակաշրջանում օտարերկրյա պետությունների քաղաքացիներից ստացվել են ՀՀ-ում ապաստան ստանալու մասին 67 դիմում, որոնցից 48-ը դիմել են ժամանակավոր ապաստանի, իսկ 19-ը փախստականի կարգավիճակ տրամադրելու խնդրանքով: Փախստականի կարգավիճակ է տրվել 1 անձի, 1 դիմում մերժվել է, մյուսները գտնվում են քննարկման փուլում: Ժամանակավոր ապաստան է տրվել 33 անձի, իսկ Իրաքի 15 քաղաքացիների դիմումներ գտնվում են քննարկման փուլում:

Ավելացվել է ապաստան հայցողների համար նախատեսված «Հատուկ կացարան» ՊՈԱԿ-ի կարողությունները, այդ նպատակով վերանորոգվել և կահավորվել են կացարանի երկրորդ հարկի ևս 22 սենյակներ՝ նախատեսված 45 ապաստան հայցողների համար:

ՄԱԿ ՓԳՀ-ի միջոցներով Իրաքից ապաստան հայցողների համար վերակառուցվել է Մասիսի շրջ. Դարբնիկ գյուղի նախկին գյուղատնտեսական քոլեջի շենքը՝ 47 կահավորված սենյակներով, որոնցում կտեղավորվեն Իրաքից ապաստան հայցողները: Նույն նպատակի համար վերակառուցվել է նաև Նոր-Նորքի Մոլդովական 70/1 հասցեի հանրակացարանի 3-րդ հարկը՝ 14 կահավորված սենյակներով:

Սահմանված կարգով ու ժամկետներում կատարվել կամ ընթացք է տրվել գործակալության հասցեով ստացված հանձնարարականներին, գրություններին, նամակներին և դիմումներին: Հաշվետու ժամանակաշրջանում գործակալությունում ստացվել է 1114 դիմում: Վերադաս մարմիններից ստացվել է 367 հանձնարարական, այլ կազմակերպություններից ստացվել է 27 գրություն, որոնց պատասխանվել է սահմանված ժամկետներում:

Գործակալության գործունեությունը պարբերաբար լուսաբանվել է ԶԼՄ-երով: Կազմակերպվել են հեռուստահաղորդումներ ՀՀ տարբեր հեռուստաընկերությունների ալիքներով, ինչպես նաև հանրապետական ռադիոյի տարբեր ծրագրերով: Հրապարակվել են հոդվածներ տարբեր օրաթերթերում և շաբաթաթերթերում:

Հաշվետու տարում աշխատանքներ են տարվել միգրացիոն համակարգի կառավարման բարեփոխումների ուղղությամբ: ՀՀ նախագահը 2009թ.-ի նոյեմբերի 18-ին հրամանագիր է ստորագրել «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության կառավարման ոլորտում միգրացիոն պետական ծառայություն ստեղծելու մասին»:

2009թ. ընթացքում լուծում չստացած հիմնախնդիրներ

2009թ. էական առաջընթաց չի արձանագրվել ՀՀ ԱԺ կողմից հավանության արժանացած ՀՀ կառավարության 2008թ. ապրիլի 28-ի N 380-Ա որոշմամբ ընդունված ՀՀ կառավարության ծրագրում ամրագրված ներքոհիշյալ հարցերում.

1. 1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնագաղթած փախստականների բնակարանային ապահովության հիմնահարցի լուծում.

Երևան քաղաքում 2009թ. դրությամբ շուրջ 1000 փախստական ընտանիք դեռևս բնակվում են ժամանակավոր կացարաններում, սակայն 2010թ. ՀՀ պետական բյուջեում միջոցներ չի նախատեսվել նշված ընտանիքների բնակարանային խնդիրը լուծելու նպատակով:

2. Աշխատանքային էմիգրացիայի երևույթի օրենսդրական կանոնակարգում, աշխատանքային էմիգրանտների իրավունքների և օրինական շահերի պետական պաշտպանության իրականացում, ՀՀ քաղաքացիների՝ Հայաստանից ելքի և Հայաստան մուտքի ընթացքում ծագող հարաբերությունների օրենսդրական կարգավորում.

Նշված խնդիրների լուծման նպատակով գործակալության կողմից մշակվել են «Արտագնա աշխատանքների կարգավորման մասին» և «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների Հայաստանի Հանրապետությունից ելքի և Հայաստանի Հանրապետություն մուտքի մասին» ՀՀ օրենքների նախագծերը: Սակայն վերոգրյալ երկու օրենքների քննարկման և ընդունման հարցում որևէ առաջընթաց չկա:

Արխիվային գործ

1. Արխիվային փաստաթղթերի պահպանության ապահովում և հաշվառում

1.1. Արխիվային փաստաթղթերի ֆիզիկական-տեխնիկական վիճակն ու պահպանությունը բարելավելու նպատակով նախատեսված փաստաթղթերի (թղթե հիմքով) վերականգնման-վերանորոգման առաջադրանքն իրականացվել է 105, գործերի կարում-կազմապատմանը՝ 82, իսկ դրանց արկղավորման նախապատրաստման (կապոցավորման) ու արկղավորման ծրագրային ցուցանիշները՝ համապատասխանաբար 143,9 ու 146,9 % -ով:

1.2. Գործերի առկայության ու վիճակի ստուգման և նիշավորման ծրագրերն ի կատար են ածվել որոշակի թերացումներով (համապատասխանաբար՝ 55% և 102,5%), ինչն էապես հետևանք է գործերի ակնհայտորեն մեծ ծավալով համալրման (արխիվ պահպանության ընդունման) և դրանց հետ բազմաբնույթ աշխատատար գործընթացների իրականացման:

1.3. Սահմանված կարգին համապատասխան իրականացվել է տարվա ընթացքում արխիվ պահպանության ընդունված բոլոր տեսակի փաստաթղթերի և գործերի կենտրոնացված պետական հաշվառում և հաշվառման հիմնական փաստաթղթերի վարում: Ըստ արխիվի կենտրոնացված պետական հաշվառման փաստաթղթերի ամփոփ տվյալների՝ 01.01.2010թ. դրությամբ Հայաստանի ազգային արխիվում պահպանվում է 6569 արխիվային ֆոնդ՝ 3 459 204 արխիվային գործերով, 342 123 պ.մ. կինոֆոտոֆոնո փաստաթուղթ, ապահովագրական ֆոնդի 12 263 227 կադր միկրոպատճեն և 6.728 միկրոֆիշ:

2. Տեղեկատու-որոնողական համակարգի ստեղծում և կատարելագործում

2.1. Չկարգավորված վիճակում պահպանության ընդունված թղթե կրիչով (անձնական ծագման) փաստաթղթերի գիտատեխնիկական մշակման առաջադրանքն իրականացվել է 99,3, կինոֆոտոֆոնո փաստաթղթերինը՝ 120,6 %-ով: Արխիվային գործի ցուցակների վերամշակման ու կատարելագործման առաջադրանքը կատարվել է 98,2 %-ով:

2.2. Տվյալների էլեկտրոնային շտեմարանի համալրման նպատակով արխիվային փաստաթղթերի քարտագրման (քարտերի կազմման) ծրագիրը կատարվել է 68,7 %, իսկ քարտերի (քարտային տեղեկատվություն) համակարգիչ ներառմանը՝ 100,6 %-ով:

2.3. Արխիվային տեղեկատուների (թեմատիկ ցանկեր) կազմման առաջադրանքը կատարվել է 175 %-ով: Բացի այդ, հաշվետու ժամանակաշրջանում ՀԱԱ կառուցվածքային (2) և առանձնացված (38) ստորաբաժանումների կողմից աշխատանքներ են տարվել

(արտածրագրային կարգով) «Նախկին ԽՍՀՄ հիմնարկների, կազմակերպությունների և ձեռնարկությունների անձնակազմին վերաբերող փաստաթղթերի պահպանության տեղի մասին միջպետական տեղեկատուի» համար պահանջվող տվյալների ու տեղեկությունների նախապատրաստման ուղղությամբ: Նախատեսվում է գործընթացն ավարտին հասցնել 2010 թվականին:

3. Արխիվային փաստաթղթերի համալրում և փորձաքննությամբ արժեքավորում

3.1. Թղթե կրիչով փաստաթղթերի համալրման ծրագիրը կատարվել է 203%-ով: Կինոֆոտոֆոնո փաստաթղթերինը՝ շուրջ 3 անգամով ավել, ինչը պայմանավորված է «Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ-ի (նախկինում՝ Համո Բեկնազարյանի անվան «Հայֆիլմ» կինոստուդիա) կողմից բավական մեծ ծավալով կինոփաստաթղթերի և այլ աղբյուրներից զգալի թվով լուսանկարների (ընդամենը 23667 պ.մ.) համալրման պարագայով:

3.2. Արխիվի համալրման աղբյուր և այլ կազմակերպություններում առկա արխիվային փաստաթղթերի ու գործերի կարգավորման առաջադրանքը կատարվել է 201%-ով:

3.3. Արխիվի և նրա մասնաճյուղերի փորձագիտական հանձնաժողովների 2009-ին գումարած նիստերում արխիվային գործերի ու փաստաթղթերի (անձնական ծագման և կինոֆոտոֆոնո) ցուցակների քննարկման ծրագրային առաջադրանքը գերակատարվել է շուրջ 2,3 անգամ:

4. Արխիվային փաստաթղթերի օգտագործում և հրատարակում

4.1. Արխիվի համապատասխան բաժինների և 39 առանձնացված ստորաբաժանումներ պատասխանել են քաղաքացիներից և տարբեր կազմակերպություններից ստացված (այդ թվում՝ արտերկրից) 24 754 (2008թ ցուցանիշից 3324-ով ավելի) թեմատիկ ու սոցիալ-իրավական բնույթի հարցումների (կատարողական՝ 184 %): Հաշվետու տարում արխիվն ունեցել է 416 օգտվող (2008 թվականի համեմատ 132-ով պակաս), որոնց արխիվապահոցներից մատակարարվել են շուրջ 17 051 արխիվային գործեր, թերթերի լրակազմեր, միկրոպատճեններ, կինոֆոտոֆոնո փաստաթղթեր ու անհրաժեշտ այլ արխիվային նյութեր:

4.2. Հաշվետու ժամանակաշրջանում արխիվային փաստաթղթերի օգտագործմամբ նախապատրաստվել ու հեռարձակվել և (կամ) հրատարակվել է 53 ռադիոհեռուստատեսային հաղորդում ու 21 լրագրային հոդված: Կազմակերպվել է 6 թեմատիկ ցուցահանդես՝ այդ թվում՝ Ադանայի կոտորածների 100-ամյակի, Ջոն Կիրակոսյանի ծննդյան 80-ամյակի, Արամ Մանուկյանի ծննդյան 130-ամյակի, Հայաստանի ազգայի արխիվի հիմնադրման 85-ամյակը և այլ տարելիցներ նշելու հետ:

4.3. Լույս են ընծայվել «Բանբեր Հայաստանի արխիվների» 2009թ. 2 համարները, փաստաթղթերի 3 ժողովածու և հրատարակվել է արխիվային փաստաթղթերի 16 հավաքածու՝ նախատեսված 13-ի դիմաց:

5. Միջազգային համագործակցություն

5.1. 2009թ. նախապատրաստվել է համագործակցության երկկողմ համաձայնագիր էկնքելու Հայաստանի ազգային արխիվի և Եգիպտոսի ազգային արխիվի միջև:

5.2. 2009թ. նշվեց Հայաստանի ազգային արխիվի հիմնադրման 85 ամյակը, որի շրջանակում Երևանում կայացավ Արխիվների միջազգային խորհրդի (ԱՄԽ) «Եվրասիկա»

տարածաշրջանային բաժանմունքի հերթական՝ 10-րդ կոնֆերանսը և ԱՊՀ անդամ պետությունների պետական արխիվային ծառայությունների ղեկավարների խորհրդատվական խորհրդի նիստը, ինչպես նաև Հայաստանի և Ռուսաստանի արխիվագետների ամենամյա «կլոր սեղան» հերթական հանդիպումը: Արխիվի տնօրեն և ԱՄԽ «Եվրասիկա» բաժանմունքի նախագահ Ա. Վիրաբյանը մասնակցել է Մայրայում կայացած Արխիվների միջազգային խորհրդի գործադիր կոմիտեյի հերթական նիստին, ապա Փարիզում Եվրոմիության հովանու ներքո Հայկական բարեգործական ընդհանուր միության կազմակերպած հայկական մշակութային արժեքների պահպանության հիմնախնդիրներին նվիրված գիտաժողովին, արխիվի տնօրենի տեղակալ Ս. Միրզոյանը Մոսկվայում մասնակցել է ամենամյա Լազարյան ընթերցումներին, իսկ բաժանմունքի վարիչ Ի.Ջաղեթյանը՝ ՌԴ արխիվային գործակալության կազմակերպած էլեկտրոնային փաստաթղթերի համալրման և պահպանության հիմնախնդիրների քննարկման միջազգային ուսուցողական սեմինարին մասնակցելու համար:

6. Տնտեսական գործունեություն

6.1. 2009թ. պետբյուջեի ֆինանսավորմամբ (42 միլիոն դրամ) արխիվի գլխավոր մասնաշենքի պահոցներում տեղադրվել է օդաորակման նոր համակարգ, ձեռնարկատիրական գործունեության միջոցների հաշվին ընթացիկ և հիմնանորոգման աշխատանքներ են իրականացվել արխիվի N2 մասնաշենքում (փոխվել են ջրամատակարարման համակարգը, վերանորոգվել են սանհանգույցները, ճեմասրահը վերակառուցվել է երեք աշխատասենյակի), կինոֆոտոֆոնո փաստաթղթերի և ապահովագրական պատճենների մասնաձյուղում վերականգնվել է փոթորիկի պատճառով ավերված տանիքը, հիմնովին վերանորոգվել են Արարատի և Արագածոտնի մարզային մասնաձյուղերի զբաղեցրած շինություններում, փոխվել են Թալինի ներկայացուցչության զբաղեցրած շինության լուսամուտները:

6.2. ՀՀ կառավարության 2009թ. հունիսի 26-ի N 707-Ա որոշմամբ համայնքային սեփականություն հանդիսացող Ապարանի, Ծաղկահովիտի, Թալինի, Մարտունու, Սևանի, Սպիտակի, Ստեփանավանի, Եղվարդի, Մարալիկի, Աշոցքի, Ջերմուկի, Նոյեմբերյանի, Բերդի ներկայացուցչությունների զբաղեցրած տարածքների համար կնքվել են անհատուց օգտագործման պայմանագրեր: